

ԵԶՂԻՆԵՐԻ ԴԱՎԱՆԱԼՔԸ, ՍՈՒՐԲ ԳՐՔԵՐԸ

Եզդիները՝ 40 միլիոնանոց քուրդ ժողովրդի այն հատվածն է, որ դարերով հետապնդվելով մուսուլմանական տարբեր ժողովուրդների կողմից (արաբ, թուրք, պարսիկ) կարողացավ պահպանել ու մեր օրերը հասցնել քուրդ ժողովրդի նախասկզբնական կրոնական ուսմունքը՝ եզդիզմը:

Եզդիները բնակվում են գլխավորապես Իրաքում, Սինջարում, որտեղ գտնվում է նրանց սրբավայրը՝ Լալեշը և Շեյխանի շրջաններում: Թուրքիայում թուր-Աբդինում, Ածբինում (Նիսիբին), Դիարբեքիրում, Տիգրիսի վերին հովիտներում, Սուլում, Սասունում, Բիթլիսում և Վանում: Եզդիներ կան նաև Սիրիայի Արուջ, Բիրջակ, Քլիս, Աֆրին, Ամուդա, Կամիշլի շրջաններում: Իրանում եզդիները բնակվում են Թավրիզի շրջակայքում:

Ամենուրեք պաշտոնական վիճակագրությունը թաքցնում է եզդիների իրական թիվը: Ըստ Ռոժե Լեսկոյի միայն Սինջարի եզդիների թիվը կազմում է 23.000 (Ռոժե Լեսկո «Les yezidi, Beyrouth» 1938 թ.):

Եզդիական սփյուռքի ամենախոշոր կենտրոնը այնուամենայնիվ մնում է Հայաստանը (60.000): Հայաստանում եզդիները բնակվում են Արագածոտնի մարզի Միրակ, Կունդախսազ, Ալագյազ, Կուրուբոխազ, Ջարջարիս, Չոբանմազ, Քրդի Փամփ, Ջամուշվան, Սանգար, Քարվանսարայ, Քորբուլաղ գյուղերում: Թալինի մարզում եզդիները բնակվում են Սորիկ, Ակկո, Գյալթո, Սաբունջի, Թիլիկ, Քալաքուտ, Սիչանլու, Բայսզ, Բարոժ:

Աշտարակի մարզում եզդիները բնակվում են Շամիրամ գյուղում: Արմավիրի մարզում Ֆերի գյուղում:

Նշված գյուղերում բոլոր բնակիչները եզդիներ են: Եզդիները բնակվում են նաև Արարատյան դաշտավայրում հայկական գյուղերում Արմավիրի, Էջմիածնի, Արտաշատի, Մասիսի» Արարատի հայկական գյուղերում, Գյումրի և Երևան քաղաքներում:

Վրաստանում եզդիները բնակվում են՝ Բաթումի, Օզարգետի, Կորուլե-տի, Թելավի, Գուրդժանի, Ցմորի, Տիանեսի, Ռուստավի, Գարդաբանի Մցխետի, Մագիլիսի, ինչպես նաև Խանրապետության մայրաքաղաք Թբիլիսիում:

Խորհրդային Միության փլուզումից հետո եզդի քրդերի համայնքներ գոյացան ՌԴ-ում՝ Նովոսիբիրսկ, Տամբով, Պիտիգորսկ, Գորկի, Յարոսլավ, Կալինինգրադի մարզում, Բալթյան երկրներում, Ուկրաինայում, Բելորուսիա-յում, Մոլդովա, Մոսկվա, Լենինգրադ, ինչպես նաև եվրոպական երկրներում,

հատկապես Գերմանիայում, ներկայումս բնակվում են 50-60 հազար եզդի-քոչեր՝ Գանովեր և Բիլեֆելդ քաղաքներում:

Եզդիականության ուսումնասիրությունը շուրջ երկու հարյուր տարվա պատմություն ունի, սակայն մինչ օրս շատ հարցեր իրենց վերջնական լուծումը չեն ստացել: Եզդիականության անվանումը ծագում է Աստծուն տրվող բազմաթիվ անուններ, որոնցից ամենատարածվածներն են Ազդան, Աիուրա Մազդան «Եզդ», «Եզդան» Շամա և Խուդա անվանումների հետ: Մարական միջավայրում այս եզրույթներով էին դիմում Աստծուն, իսկ հավատացյալները կոչվում էին «Եզդիներ»: Այս հետաքրքիր կրոնի մասին կան բազմաթիվ հակասական տեղեկություններ: Դա բացատրվում է հոգևոր կենտրոնի՝ եկեղեցու բացակայությամբ:

Եզդիականությունն պատմական ասպարեզ է իջել մարդկային պատմության արշալույսին: Եզդիական կրոնական ուսմունքի կանոնները շարադրել է Ջրադաշտը մ.թ.ա. 700 թ., երբ գրի էր առնում սուրբ գիրքը «Ձենդ Ավեստան»: Եզդիականությունը հետագայում տարածում է գտնում հարևան ժողովուրդների միջավայրում: Սկսած Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից մինչև արաբական տիրապետության վերջը, օտար նվաճողները ամենմիջ արեցին զրադաշտականությունն արմատախիլ անելու համար: Սակայն մինչև Սասանյան Պարսկաստանի կործանումն այն շարունակում էր մնալ որպես տարածաշրջանի ամենաազդեցիկ կրոնական ուսմունքը:

Մ.թ.ա. 640 թ. արաբական զորքերը Խալիֆ իբն վեզլիի հրամանատարությամբ ներխուժեցին Քուրդիստան և իսլամը տարածելու պատրվակով սրախողխող արեցին տեղի բնակչությանը, ողջ մնացածներին զենքի ուժով ստիպեցին մահմեդականությունը ընդունել: Նվաճողական այս քաղաքականության արդյունքում քուրդ ազաբնակչության զգալի մասը ստիպված էր լքել իր բնակության մշտական վայրերը և ապաստան գտնել անմատչելի լեռներում: Արաբների գերիշխանության հետ համակերպված քրդական զանգվածները զնալով օտարանում էին սեփական ազգային արժեքներից, իսկ լեռներում ապաստանած քրդերը պահպանեցին ազգային ոգին և մշակույթը: Հենց այս միջավայրում էլ ծնունդ առավ եզդիականությունը: Ցեղասպանության ենթարկված զրադաշտականները այնուամենայնիվ կարողացան Քուրդիստանի անմատչելի լեռների խորքերում պահպանել իրենց կրոնական ուսմունքը: Հակառակ արաբների բոլոր ջանքերի զրադաշտական ուսմունքը զնալով վերածվում էր ազգային գաղափարախոսության: Ահազնացող ներքին գաղթի վերջնակետը դիտվող բարձրաբերձ լեռները դարձան քրդերի նոր հանգրվանը, ուր աստիճանաբար ձևավորվեցին նոր բնակավայրեր: Գաղթի յուրաքանչյուր ալիքի հետ

նոր բնակավայրեր տեղափոխվեցին նաև գաղթականների սովորություններն ու ավանդույթները, լեզվական, մշակութային և դավանաբանական առանձնահատկությունները: Գաղթականները նոր վայրերում մի կողմից պաշտպանական նպատակներով անառիկ ամրոցներ և բերդեր էին կառուցում, մյուս կողմից իրենց հոգևոր պահանջները բավարարելու համար անմատչելի լեռներում տաճարներ էին կառուցում: Արաբական արշավանքների ժամանակ իրի էին մատնվել Քուրդիստանում պահպանված տաճարները, հուշարձանները և մշակութային արժեքները, հատկապես գրավոր հուշարձանների ոչնչացման գործում մեծ դեր է կատարել արաբ խալիֆներից Օմարը (Աթա խանգին էջ 46) վերջինիս են վերագրում հետևյալ խոսքերը «Եթե այդ զրքերը համահունչ են դուրանի ոգուն, ապա դրանց պահպանումն ավելնորդ է, քանի որ կա դուրանը, իսկ եթե դրանք հակադրվում են դուրանին, ուրեմն սխալ են և պետք չէ, որ ժողովուրդը սխալ բաներ սովորի»:

Քուրդիստանում արաբական զորքերի իրականացրած կոտորածների և մշակութային ցեղասպանության մասին հուշեր են պահպանվել նաև քրդական պոեզիայում: Նման վկայություններից է մ.թ. 669 թվականից պահպանված մի բանաստեղծություն, որը շարադրված է հորթի կաշվի վրա: Այն հետագա դարերում սերնդե սերունդ փոխանցվում էր Դերսմի և Սուլեյմանի շրջաններում:

Քանդվել են, պղծվել արտուշան, բազին,
Եվ պապանծվել է բարձրագույն Ոգին,
Արաբն է չարիք հասցրել հաբուրին,
Պալեի կողմից մինչև Շահրիզուր
Գերի կուղարկվեն ամեն կին, աղջիկ
Կենսահատվեն յազադի մարդիկ,
Ջրադաշտի թափն ձեռքն առավ մանուն,
Սիրամազդան էլ հոգ չի տանում:

թարգմ. Չ. Ռաշի

Ամեն նոր նվաճող Քուրդիստանը գրավելուց հետո չէր բավարարվում քուրդ ժողովրդի ստեղծած արժեքները ոչնչացնելով և փորձում էր շարադրել քրդերի պատմության սեփական տարբերակը և հարցը ներկայացնել այնպես, իբր հենց ինքն է սկիզբ դրել այդ պատմությանը: Հարկ է նկատել, որ «Չկա ավելի մեծ դժբախտություն քան այն, երբ քո ժողովրդի պատմությունն օտարներն են գրում» (Աթա խանգին 50 էջ): Մեզ հասած կցկտուր տեղեկությունները և եզդիական պաշտամունքի գիտական վերլուծությունը ցույց են տալիս, որ իր արմատներով այն հենվում է զրադաշտականությանը: Այս կապակցությամբ ռուս պատմաբան Վ. Նիկիտինը գրում է «Մառը գտնում էր, որ եզդիականությունը քրդերի նախախաղաղական շրջանի կրոնն է (Վ. Նիկիտին, Քրդերը, էջ 401):

Մեծագույն կորուստների գնով նրանց հաջողվել է պահպանել սեփական հավատքն ու ազգային արժեքները: Դժբախտաբար շարունակական հալա-

ծանքներն ու կոտորածները և պատմական զարգացման հետևանք դիտող կրոնական, աղանդական և ցեղային հակասությունները, ինչպես նաև գաղութարարների «բաժանիր և տիրիր» քաղաքականությունը մինչև օրս եզդի քրդերին հնարավորություն չի տվել ստանձնելու իրենց արժանավայել դերն ազգային ազատագրական պայքարի շարքերում:

Եզդի քրդերը հավատարիմ մնացին զրադաշտականությանը և մինչ օրս կարողացել են պահպանել ազգային ոգին: Այդ գոյատևումն այնքան էլ հեշտ չեղավ: Այս ընթացքում եզդի քրդերը Քուրդիստանը նվաճող գաղութարարների հրապարակած 72 հրովարտականքով 72 անգամ զանգվածային կոտորածների են ենթարկվել, նրանց ազգային և մշակութային արժեքները թալանվել կամ ոչնչացվել են: Հիմնականում դրանով է բացատրվում, թե ինչու եզդիները ապաստան են գտել լեռներում:

Զնայած այս բոլորին սոցիալական, ազգագրական, մշակութային ավանդույթները, արվեստը, գրականությունը և առասպելաբանությունը անվիճելիորեն ապացուցում են, որ եզդիականությունը հանդիսանում է եզդիական հավատալիքների բնական շարունակությունը:

Արաբական խալիֆայության թուլացումից հետո, թուրքերը շարունակեցին քրդերին բռնի կերպով իսլամացնելու արաբական քաղաքականությունը: Այդ ժամանակաշրջանում քուրդ ժողովրդի մեծամասնությունն արդեն հասցրել էր վերադառնալ իր նախնիների կրոնին: Տեղի էր ունենում առանձին ցեղերի միավորումը: Հենց այդ ժամանակ էլ օսմանցիներին հաջողվեց քրդերի մեջ երկպառակություն սերմանել խալիդ իբն Վալիդի և մի շարք այլ ցեղային առաջնորդների կաշառումով: Վալիդն ու նրա մմանները թուրքերի օգտին քարոզչությամբ էին զբաղվում, ըստ այդ քարոզիչների քրդերի կողքին ապրում էին անհավատներ: Նրանք ակնարկում էին զրադաշտականներին: Այս կերպ քրդերին հրահրում միմյանց դեմ: Այս երևույթը խիստ բացասաբար է անդրադառնում քուրդ ժողովրդի միասնականության վրա, որը շարունակվում է մինչ օրս:

Բաղդադում կատարելագործվող և եզդիականության ավանդույթների պահպանման գործին նվիրված տասնյակ քուրդ հոգևորականներ վերադարձան իրենց պատմական հայրենիք, նրանց հետ էր նաև Շեյխ Ադին, եզդիները նրան համարում էին Աստծո առաքյալ, նա Մալաք-Թավուսից հետո եզդիական պանթեոնի երկրորդ խոշոր դեմքն էր:

Շեյխ Ադին

Պատմական անձնավորություն է, ծնվել է մոտավորապես 1075 թ. Հաջարիում: Երիտասարդ տարիներին արաբական լծից ազատագրվելու ուղիներ որոնող Շեյխ Ադին հայտնի է նաև Շեխադի ալ-Հաջարի անունով:

Բաղդադում սովորելու տարիներին աշակերտել է և բարեկամական կապեր հաստատել այնպիսի հայտնի գործիչների հետ ինչպիսիք են Կադիրի աղանդի հիմնադիր շեյխ Աբդուլկադիր Գեյլունին, Քուրդ սուֆի Սահրե Կերդին, սուֆիական կրոնական ուղղության կարկառուն դեմքերի ալ-Յուլվանի, Աբդ ալ-Կադիր ալ-Գիլանի և այլոց հետ:

Շեյխ Ադին և մյուս կրոնական առաջնորդները ղեկավարում էին դիմադրական շարժումն ինչպես թուրքական ցեղերի, այնպես էլ մոնղոլների և այլ զավթիչների դեմ: 1116 թ. Շեյխ Ադին մեկնեց Քոդիստանի լեռնային շրջանները, որոնց բնակչությունը չէր ենթարկվել օտար նվաճողներին, Յաքարի և Սինջարի լեռների միջև ընկած աշխարհագրական տարածքում նա սկսեց եզդիականության քարոզչությունը համախմբելով քրդական ազգային-ազատագրական նոր գաղափարախոսության շուրջ:

Տարիներ շարունակ Յաքարիի և Սինջարի լեռներում եզդիականության և ազգային ազատագրական պայքարի քարոզչությամբ զբաղվող Շեյխ Ադին դարձավ քուրդ ժողովրդի ազգային հերոս, նրա անվան շուրջ առասպելներ հյուսվեցին: Շեյխ Ադին պայքար ծավալեց նաև արաբական գերիշխանության, արաբերեն լեզվի և մշակույթի դեմ: Իր հրապարակային ելույթներում նա նշում էր, որ քրդերը պետք է խոսեն և գրեն մայրենի լեզվով, կրոնական ծեսերն ու արարողությունները պետք է կատարվեն միայն քրդերենով, քանի որ այդպիսին է Աստծո կամքը:

Կյանքի վերջին տարիներին Շեյխ Ադին հաստատվել է Լալեշում, Սոսուլ քաղաքից հյուսիս, խոր ձորի մեջ գտնվող նեստորական ավերված մի եկեղեցում (տես Rojet Lesko, Les yezidi 22 էջ): Նա հիմք է դրել աղավինների կրոնական ուղղությանը: Ըստ աղբյուրների վկայության, Ադին եղել է իր ժամանակի աղանդավորական շրջաններում ամենախոշոր քարոզիչներից մեկը, միջնադարի ականավոր գիտնական և փիլիսոփա:

Շեյխ Ադի եղբոր որդիները Սիրիայից տեղափոխվում են նրա մոտ, որոնք հիմնականում զբաղվում էին կրոնական գործունեությամբ, որոնց ջանքերով էլ աղավինների աղանդը զնալով տարածվում էր շրջակա եզդիների մեջ, ծեռք բերելով մեծ թվով կողմնակիցներ:

Այստեղ Շեյխ Ադին ծանոթություն է հաստատում լիբանանցի արաբ իսլամազետների հետ և կրոնական, պատմական, փիլիսոփայական, աշխարհագրական ու աստղագիտական մի շարք աշխատություններ շարադրեց: Այս ուսումնասիրությունների արդյունքում նա բարեփոխման ենթարկեց զրադաշտականությունը, հավատարիմ մնալով նրա հիմնական սկզբունքներին:

Շեյխ Աղին մեծ ժողովրդականություն էր վայելում, նա երբեք չէր դժուար իր խոսքը և ասկետական կյանք էր վարում:

Քուրդ ժողովրդի պատմության մեջ կարևոր դեր խաղաց Շեյխաղին: Նա վախճանվեց 1162 թվականին Լալեշում:

Եզդիները հավատում են Աստծուն: Եզդիականության մեջ Աստված տարբերվում է իր արարչագործությամբ: Այս վարդապետության մեջ Աստված տիեզերքի սոսկ ստեղծողն է:

Եզդիականության մեջ «Առաջին օրը» Աստված ստեղծեց Ազազիլ հրեշտակին, որը հենց ինքը հրեշտակապետ Թաուսն է: Այնուհետև Աստված ստեղծեց յոթ երկինքներ, երկնակամար, արև ու լուսին, ապա մարդկանց, թռչուններին և մյուս կենդանի էակներին: Աստված ներկայացված է որպես ամենակարող էակ օժտված գերբնական ուժով:

Ազգա Աստվածն իր հրամանները մարդկային ցեղին է հաղորդում Թաուս հրեշտակի միջնորդությամբ: Եզդիների պաշտամունքի մեջ Թաուս հրեշտակին հատկացվող տեղն ու դերը: Ահա թե ինչպես է բնութագրում սուրբ գիրքը «Սսհաֆի Ռաշը» Թաուս հրեշտակի տեղն ու դերը: Ըստ եզդիական հավատալիքների, Աստված տիեզերքը ստեղծել է Մալաբ-Թաուսի օգնությամբ՝ նրա հետ միասին: Եզդիական հավատքում Մալաբ-Թաուսը հայտնվում է սիրամարդի տեսքով, իսկ սիրամարդը Արևելքում համարվել է գեղեցկության և վեհության արտահայտություն (Nikitin, 227): Իրաքում բնակվող եզդիների մի ավանդություն համաձայն սիրամարդը նախկինում եղել է Աստծո սիրելի թռչունը և ապրել դրախտում, բայց մեծամտության և գոռոզության համար վտարվել է դրախտից (Ամիրբեկյան էջ 68-70):

Օտար նվաճողները ինչքան էլ փորձեցին վատաբանել Թաուսին, այնուամենայնիվ եզդիական հավատալիքներում նա մնում է որպես ամենակարող հրեշտակը: Եզդիականության մեջ Արևը սուրբ է: Աղոթելիս բավարար է համարվում դեմքով դեպի Արևը շրջվել: Մարդը կարող է իր երկրպագությունը կատարել ցանկացած վայրում, միայն թե դեմքով շրջված լինի դեպի Արևը: Թեև աղոթքները մեծաթիվ են, սակայն որպես հիմնական են դիտվում առավոտյան, կեսօրին և երեկոյան կատարվող աղոթքները, բոլոր աղոթքները հյուսվում են քրդերենով:

Սինչև անցյալ դարի վերջը, այն կարծիքն էր իշխում, թե եզդիականությունը հիմնված է զուտ բանավոր ավանդույթների վրա: Սակայն առանձին ճանապարհորդողների նոթերում, հանդիպում էին ականարկներ եզդիական սուրբ գրքերի գոյության մասին: Ամաստաս Մառը մեծ դժվարությամբ կարողացավ ձեռք բերել այս երկու գրքերի ծածկագրված պատճենները, որոնք նա վերծա-

նելով հրատարակեց 1911թ. Փարիզում (տես Anastase Marie): Եզդիական ծածկագրերը, որոնցով գրված են այս գրքերը բաղկացած են 34 /33?/ տառերից:

Եզդիական ուսմունքի հիմնադրույթներն ամփոփող այս փաստաթղթերը մեծ հետաքրքրություն առաջացրին արևելյան հասարակության լայն շրջանակներում:

Հետագայում այդ բնագրերի մի քանի նոր տարբերակներ հայտնվեցին, որոնք լայնորեն շրջանառության մեջ մտան, թարգմանվեցին գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն, անգլերեն: Հրապարակի վրա առկա ամենալիակատար և գիտականորեն բարձր արժեք ունեցող հրատարակությունը պատկանում է ակադեմիկոս Ա. Մարին:

Եզտադիական սուրբ գրքերը խիստ հսկողության տակ պահվում են Շենգալի լեռներում ընկույզի փայտից պատրաստված հատուկ տուփի մեջ: Հասարակ եզդիներին մանավանդ այլադավաններին չի թույլատրվում տեսնել դրանք: Ամաստաս Մարին կաշառեց գրադարանավարներից մեկին՝ Հաբիբին և ձեռք բերեց դրանց պատճենները:

Զափագանց փոքրածավալ, բայց ուշագրավ և մեծ հետաքրքրություն ներկայացնող այս գրքերը պարունակում են եզդիական դավանանքի հիմնական սկզբունքների համառոտ շարադրանքը, դրանցից առաջինը կոչվում է "Kitübs Jalwa"-«Գիրք հայտնության»: Այն ամբողջովին նվիրված է Մալաթ-Թավուսին, հանդիսանալով նրա մենախոսությունը: Նա կոչ էր անում իր համայնքին չչեղվել շիտակ ճանապարհից և չհրապուրվել հարևան այլադավանների կրոնական գաղափարներից: Իր երկրպագուներին նա բարիք և փառք է խոստանում:

ԵԶԴԻԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԳՐՔԵՐԸ

«ԶԹԱԲԻ ՋԵԼՎԱՆ» ԵՎ «ՄԸՍՀԱՖԻ ՈՒՇԸ»

Մարական թագավորության անկմանը նախորդող և հաջորդող ժամանակաշրջաններում հաճախակի դարձած նվաճողական արշավանքները քուրդ հասարակությանը այնպիսի ծանր հարված էին հասցրել, որի հետևանքով ամենից շատ տուժեցին քրդական մշակույթը, գիրն ու գրականությունը: Արդեն ստեղծած բազմաթիվ գրավոր աղբյուրներ հրո ճարակ դարձան կամ ոչնչացվեցին նվաճողների ձեռքի սմբակների տակ, զրկելով մեզ պատմական հիշողությունից: Այդ է պատճառը, որ հեռավոր անցյալի դեպքերի ու դեմքերի մասին մեզ հասած կցկտուր տվյալները քաղում ենք քուրդ հասարակության մեջ բավական տարածված բանավոր ավանդույթներից, առասպելներից և բանահյուսական այլ ժանրատեսակներից՝ «ղավ ու բեյթերից»: Եզդիների շրջանում տարածում ունի այն կարծիքը, որ եզդիների սուրբ գրքերը «Քիթաբի Ջելվան» և

«Մըսհաֆի Ռաշը» գրի են առնվել Շեխադի կողմից Ձենդ Ավեստայից պահպանված պատառիկների հիման վրա: Այդ կարծիքին է նաև հայտնի գերմանացի պատմաբան Յոզեֆ Յամմերը (1774-1856) նա գրում է «Արդեն հինգ-վեց դար էր, ինչ զրադաշտականությունը կորցրել էր իր գրավոր աղբյուրները: Այն տարիներին, երբ իսլամը տարածվում էր Անատոլիայում, Շեխադին ի մի բերեց զրադաշտականության պահպանված պատառիկներ և մշակելով ու լրացնելով դրանք, այն վերականգնեց եզդիականության անվան տակ»:

«Քիթաբի Ջիլվան» գրված է բարակ կաշվի վրա, բաղկացած է 8 էջից, յուրաքանչյուր էջի վրա 16 տող, գրված բաժնի լայնությունն է 27x19 սմ, մաքուր բաժինը 17x11 սմ: Լավ է պահպանվել տառերից մի քանիսը փոխառնված է արաբերենից, մի քանիսը հին եվանգելներից, մի քանիսը խալդերենից, մի քանիսն էլ մանդալիներենից:

Այդ ժամանակ եզդիները շրջապատված էին թշնամի հավատքով ժողովուրդներով (արաբ, թուրք, պարսիկ): Սուրբ գրքերի հեղինակը մշակել է այս այբուբենը ոչ թե երեխաներին սովորեցնել, այլ այդ այբուբենով շարադրել է սուրբ գրքերը, որպեսզի մուսուլմանները չկարողանան կարդալ:

Յուրաքանչյուր էջի վրա կան երկու բաժիններ՝ մի բաժինը գրված է, մյուս բաժինը մաքուր: Մի բաժինը մաքուր են թողել, որպեսզի նկարներ նկարեն: Պրանք հիմնականում այն նկարներն են, որոնք նկարած են տուփի վրա:

Առաջին նկարը կես ամսեկան լուսնու նկարն է, երկրորդ նկարը արշալույսի պայծառ աստղն է, երրորդը՝ Մալաք-Թաուսի նկարն է, չորրորդը՝ երկրագնդի նկարն է, հինգերորդը՝ Շամսի (արևի) նկարն է, վեցերորդը՝ երկու գետերի նկարն է, յոթերորդը՝ սատանայի գլուխն է, որ ունի երկու ալանջ և երկու պոզեր (սատանայի նկարն է), ութերորդը նկարը ճիճակ ծաղկի նկարն է, իր երեք տերևներով, ավելի շատ կրակի երեք շողերով:

«Քիթաբի Ջեկվան» եւ «Մըսհաֆի Ռաշը»

Մինչև հիմա չի հաջողվել հայտնաբերել պատմական մի աղբյուր, որ լույս կսփռեր եզդիականության սուրբ գրքեր համարվող «Քիթաբի Ջեկվայի» և «Մըսհաֆի Ռաշի» գրության պայմանների և ժամանակաշրջանի շուրջ: Եզդիական սուրբ գրքերը խիստ հսկողության տակ պահում են Շենգալի լեռներում գտնվող մի զրադարանում ընկույզի փայտից պատրաստված տուփի մեջ: Տուփի երկարությունն է 33 սմ, լայնությունը 22 սմ, հաստությունը 7 սմ: Տուփի կողքերին արծաթյա տերևներ են փակցրել, մեջտեղում Մալաք-Թաուսի նկարն է, աջ կողմում Շեյխ Շամսի (արևի) նկարն է, ձախ կողմում Շեյխ Սինի (լուսնու) նկարն է, Մալաք-Թաուսի վերևում արշալույսի վառ աստղն է: Աջ կողմում մի քիչ վերև անկյունում երկու գետանման գծեր են գծված, որոնք

մարմնավորում են Քրդստանով հոսող Դջլ ու Ֆարուտ գետերը: Դիմացը ու ձախ անկյունում կրակի երեք շողերի նկարն է, որ մարմնավորում է կրակի պաշտամունքի մասին: Ներքևում գետերը մարմնավորող գծիկների մոտ կա մի կլոր դրամի նկար, որը մարմնավորում է երկինքը, ձախ անկյունում ավազի մի քանի հատիկներ մարմնավորում են երկրագունդը: Այդ նկարները, որ փակված են սուրբ արկղին ու «Քիթաբի Ջելվային» նշանակում է, որ եզդիները դավանում են Շամսին, լուսնուն, առավոտյան աստղին և Մալաք-Թաուսին:

Երկրորդ գիրքը կոչվում է «Մըսհաֆի ռաշ», «Սև մատյան» մագաղաթի մի փաթեթ է երկարությունը՝ 2,80 սմ, բաղկացած է 152 տողերից, տառերը համեմատաբար ավելի մեծ են: Նրանում շարադրվում է հիմնականում աշխարհի արարչագործությունը և եզդիների առաջացումը:

Այս երկու գրքերի հեղինակային պատկանելության և թվագրման խնդիրները նույնպես առ այսօր պարզաբանված չեն:

Եզդիական սուրբ գրքերը ավանդված են երկու տարբերակով՝ քրդերենով և արաբերենով: Սկզբնական բնագիրը եղել է քրդերենով, իսկ արաբերեն տարբերակը ածանցված է նրանից:

Այս երկու սուրբ գրքերը գրված են մուկրի բարբառով:

Տեսնես երկու գրքերից ո՞րն է ավելի հին, գուցե գրքերի լեզվից և օտար բառերի գործածությունից պարզենք որն է ավելի հինը, եթե սա վերցնենք, որպես ուղենիշ ոչ մի արդյունքի չենք հասնի, որովհետև երկու գրքերի լեզուն նույն է: Որքան օտար բառեր առաջինում են գործածել, այդքան էլ գործածել են երկրորդում: Սակայն զգացվում է, որ «Քիթաբի Ջելվայի» մտքերը ավելի հստակ են, իսկ «Մըսհաֆի ռաշ»-ում մտքերը ավելի պրակտիկ են:

Համոզված են, որ «Քիթաբի Ջելվան» ավելի հին է, քան «Մըսհաֆի ռաշը», չնայած վերջինս ավելի շատ ժողովրդականություն է վայելում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Emir Celadet Bedir-Khan. "Hawar" "Zerdešt û rêya Zerdešt" Damascus / Syria. 1943¹, չբ 9:
2. Hawar, revue kurd publié à Damas en 1932 et 1933.
3. R.P. Lammens, Le massif du Djebel sipan et les Yezdî de Syrie, Mélanges de l'Université St Joseph; Beyrout, 1906.
4. R. Lescot, Quelques publication récentes sur les yezdis; Bulletin d'Etudes orientales, VI
5. Anastase marie, El yezidiyya; mašîiq, II, Beyrouth, 1899. La decouverte récente des deux livres sacrés des yezidis; Anthrops, VI.
6. A. Menant, Les Yézidiz, Paris; 1892.
7. A. Mingana, Les yezidis, Paris; 1892.
8. F. Nau, Note sur la vie et la date de cheikh Adi; revue de l'orient chrétien, 2 série, IX.
9. Siouffî, Notice sur le cheikh Adi et sur la secte des Yezidis: JA, série VIII, t.5.
10. Etem Xengîn 46
11. 4. Նիկիտին, Քրդերը, էջ 401: